Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ստորև հրատարակվող Ղևոնդ Ալիշանի նամակների ֆոտո-ընդօրինակությունները շնորհակալությամբ ստացել ենք Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Գեր. Գրիգորիս Մանյանի հոգատար պատրաստակամության շնորհիվ: Ըստ աբբահոր հավաստիացման, Վիեննայի միաբանությունը Ալիշանի գրչին պատկանող ուրիշ նամակներ չունի:

Մեզ առաքված նամակներից առաջինը գրված է 1885 թ. մայիսի 2-ին, իսկ վերջինը՝ 1897 թ. փետրվարի 1-ին և հասցեագրված է միաբանության անդամներից՝ Սիմոն Անտոնյանին, Ղևոնդ Հովնանյանին և Արսեն Այտընյանին: Ալիշանի կյանքի սա այն ժամանակաշրջանն էր, երբ նա, «Բազմավեպում» հայագիտական-բանասիրական բնույթի զանազան մեծ ու փոքր ուսումնասիրություններով հանդես գալուց և միաբանության ներքին աշխատանքներում իր եռանդուն մասնակցությունը բերելուց բացի, զբաղված էր իր նշանավոր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության ստեղծմամբ: Հրապարակվող նամակներն այս առումով հետաքրքրական ծալքեր են բաց անում՝ կապված այդ գործի ստեղծման, Ալիշան-գիտնականի աշխատանքային նկարագրի, նրա մեծ աշխատասիրության և ուրիշ առ այսօր անհայտ այլևայլ մանրամասնությունների հետ, բացահայտում են Ալիշանի կատարած մտավոր ծանր աշխատանքի ներքին բովանդակությունը, նրա գիտական խստապահանջությունն ու բարեխղճությունը: Նամակների ընդգծելի կարևորությունը նաև այն է, որ նրանցում, գրեթե որոշակի առարկայականությամբ, հառնում է ավագ ընկերը, հոգատար ու բանիմաց խորհրդատուն, ներքին հարուստ նկարագրով օժտված մարդը: Նամակներում ամենևին էլ քիչ տեղեկություններ չեն պարունակվում նրա բնավորության մարդկային, բարոյական, ընկերական գծերի մասին, ուստի օգնում են մեզ բացահայտելու նրա հասարակական նկարագրի մի կարևոր կողմը ևս:

Մեր գրական-մշակութային կյանքի այն մեծագույններից է Ալիշանը, որն իր գիտական աշխատությունների հետ կապված այլևայլ հարցերի բերումով, մի քանի

հազարի հասնող ընդարձակածավալ նամակագրություն է ունեցել ժամանակի հայ, ռուս և եվրոպական գրեթե բոլոր նշանավոր մտավորականների հետ։ Այս առումով, Նահապետի նամակների «հետքերը» երևում են Բեռլինում ու Երուսաղեմում, Լոնդոնում ու Փարիզում, Էջմիածնում ու Թիֆլիսում, Մոսկվայում ու Պետերբուրգում, Վիեննայում ու Հռոմում, Պոլսում ու Զմյուռնիայում և այլն։ ՈՒստի հասկանալի է, որ նրանց՝ ըստ հնարավորին ամբողջությամբ հավաքելն ու մեկտեղելը, ապա և հրապարակելը պետք է հանդիսանա մեր բանասիրության առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից մեկը։ Վիեննայից ստացված այս նամակները գալիս են մի փոքր չափով ևս նեղացնելու Ալիշանի նամակների «աշխարհագրության» սահմանները, և հետևաբար, անսքող հույս ներշնչելու, որ այս բնագավառում արվել է էլի՛ մի կարևոր առաջընթաց քայլ։ Այս հանգամանքն առանձնապես նշելի է, որովհետև մենք անգամ կողմնակի վկայություններ չունեինք այն մասին, որ Ալիշանը նամակագրական կապ է ունեցել Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամների հետ։

Նամակները հրապարակման պատրաստելիս, մեր կողմից կատարված վերականգնումները վերցված են սուրանկյուն փակագծերի (<>) մեջ։ Դրանք, ընթերցող և գիտական հասարակայնությանը առավել ճշգրիտ ներկայացնելու նպատակով, Ալիշանի կատարած հանրածանոթ հապավումները (օր. Հ.=Հայր, Վ.=Վարդապետ, Խ.=Խոնարհ, Խ.Ծ.=Խոնարհ ծառա, Ն.Ծ.=Նվաստ ծառա) չենք վերականգնել։

№ 1

<ՍԻՄՈՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ>[1]

Վենետիկ, Ս.Ղազար, 2 մայիսի 1885

Մեծարգոյ վ<երապատուելի> հայր.

Հուսկ ուրեմն աւարտեաց արուեստաւոր իմ զտպագրութիւն երկուց տեսարանաց Պապառօնեան բերդին[2], որում սպասէի, զի դարձուցից զբնագիրսն առ շնորհողդ. առ որ և դարձուցանեմ այսօր զլանաձև ծրարին, որում եղեալ եմ և օրինակն ինչ ի վիմագրելոցն։ Զայսոսիկ զերկոսին միայն ետու վիմագրել. այլքն յոյժ անկատար և անկերպարան

երևեցան, և առաւել քան զայն՝ անստոյգք, եթէ Պապառօնի իցեն թէ Ս<ուրբ> Փրկիչ անապատին, զոր տուեալ է կառուցանել Կոստանդին Պայլ, հայրն Սմբատայ Գունդստաբլի։

Ծրարեմ ի թղթիս և զպատկեր Անտիոքեան լատինագիր արծաթապղինձ դրամոյ Լեւոնի Ա. Թագաւորի. հանեալ ի գրոց Շլումպերկերի[3], որ արդարև ծանրագին է. և եթե չգոյր առատասիրտ բարեկամ ոք, որ հայթհայթեաց՝ դժուարին էր և ինձ հանդիպել մատենին։ Բայց քան զայս, հետաքննելի լիցի հանդերձեալ հայկական դրամաբանութիւն նորին։

Լանկլուա[4] հրատարակեալ է հայագիր դրամ մի Պետրոսի, թագաւորի Կիպրոսի. հարազատն իմ երկբայի ընդ այն[5], իսկ ես ոչ. ունիցի՞ արդեօք վ<երապատուելի> հայրդ այդպիսի դրամ, կամ համարիցի՞ ստոյգ։

Ընդ կշիռ ոսկի դինարի մերոյս Լեւոնի՝ իրաւունս ունիք զարմանալ. զի տարածութիւնն չէ մեծ, որպէս վկայէք, քան զՁեր իսկ կշիռն, զոր դարձեալ ետու փորձել եւ կշռել՝ երից այլևայլ ոսկերչաց, գտաւ եւ սակաւ ինչ աւելի, քան ՋԵՕԹՆ դրամ. իսկ զոսկին՝ երեքին եւս վկայեցին լինիլ ընտիր իբրեւ զծեզին, բայց հնչումն ոչ ունի։ Ծանրութեանն պատճառ թերեւս սակաւ ինչ ուռոյց կամ թանձրութիւն փորոցն իցէ. թերեւս եւ մամռնայ ձեւն ղօղեալ իցէ անդ. ոչ կարեմ այլազգ լուծանել զգաղտնիսն։ Ի կարծիս եղեալ է այլ ումն, թէ ոչ ոսկի, այլ ԲԼԱԴԻՆ իցէ, բայց կարծեմ անծանօթ էր մետաղդ այդ յայնժամ[6]։

Շլումպերկերի ոսկվոյն Ա կողմն է թագաւորն բազմեալ ի կրկնառիւծ զահ, Բ, առիւծ թագազլուխ եւ կրկնաթիւ խաչ ի թիկանց։

Ակն ունիմ թէ ոչ, այլ շատ յապաղեսցէ եւ վ<երապատուելի> հայրդ զիւր բազմամեայ վաստակ զՀայկական դրամոց, այլ փափագէի թէ մի՛ ի գերմանական ծանրատաղտուկ բարբառ[7]։

Մաղթելով քաջառողջութիւն եւ յաջողութիւն մնամ

Խ.Ծ. եւ եղբայրակից

№ 2

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 3 փեբ<րուար> 1888

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր

Ըստ աւետարանական հրամանին կամ օրինակի՝ ես ի վերջոյն սկսանիմ գլխոյ գրելոցդ հարցմանց, որ և տիրապէս գլուխ է ամենայնին, զի հոգւոր սիրով մաղթես ինձ բարիս՝ յիշատակաւ մերձեցեալ տօնի անուանատու սրբոյ մերոց. և ամենագիտ ճարտարութեամբ սիրոյն՝ ինքնին իսկ մաղթիս յանուանակցէդ[8], քանզի և չէ իսկ հնար ողջագուրել զոք և ոչ ողջագուրիլ ի նմանէ, զըմբռնելդ զիս՝ ըմբռնեալ գտար, և ոչ թողից զատ քո իսկ հաւանութիւն, զի որ կամի արձակիլ՝ լայ և ոչ ծիծաղի՝ որպէս Դուդ: Արդ որչափ ինչ ըղձաս վասն իմ, այնչափ և Քեզ առ յինէն, չասեմ աւելի, զի անչափ համարիմ զքոյդ: Բայց հաւելցես և զայս, մատուցանել ի դիմաց իմոցաւ Գերապ<այծառ> Աբբահայրդ զխոնարհ մեծարանս իմ, համբուրիւ աջոյն և զողջոյն առ յ<արգելի> եղբայրսդ[9], ընկալեալ և քո զնոյն յանուանակցէ ընկերաց Ս<ուրբ> Վարդանայ:

Եկեսցուք արդ ի խնդիրսդ: 1. Յերեսին ևս մեկ օրինակս Կիրակոսի Պատմութեան՝ զոյ ՀԱՆԵԼՈՒԿ բառն, որպէս տպագրեալն է[10], բայց օրինակք մեր չեն հնագիրք. մին գրեալ է յամին 1669, այլ երկուքն անթուականք, այլ մերձաւորք առաջնոյն:

2. Աշխարհական մատենագիր յառաջ քան զԺԲ դար, համարիմ, թեև գրուածք չերևեցին նոցա արդ կամ հազիւ, զԴԱՒԻԹ ՏԱՐՕՆԵՑԻ թարգման, յորմէ ուրիշ և կրտսեր թուի ԴԱՒԻԹ ՀԻՆԱՐՈՏ յ՝Ը դարու, մերձաժամանակ սորին միւս ևս ԴԱՒԹԱԿ բանաստեղծ, զոր ընթեռնում յԱղուանից պատմութեան Կաղանկատուացւոյն[11]: ՓԻԼՈՆ Տիրակացի յ՝Է դարու թուի ինձ աշխարհիկ: ՍԱՀԱԿԱԴՈՒԽՏ, քոյր Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, երգահան: Մոտանալով մարթ է հիշել յ՝Թ դարու զՄՈՒՇԵՂ Բագրատունի, ըստ պատմութեանն Թովմայի Արծրունւոյ[12], ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԺՇԿԱՊԵՏ ի նմին դարու: Ի Ժ և ի ԺԱ դարու յիշեն երեք Գագիկ թագաւորք, Արծրունին,

Բագրատունին և Կարնեցին, պայքարողք ընդ յոյնս և թղթագիրք։ Մագիստրոս յիշէ զԴԱՆԻԵԼ երաժիշտ, զոր կարծեմ աշխարհական և որոյ անուան տառիք գտանի Մեծացուսցէ մի[13]։ Յիշի ի նմին ժամանակի և ԽԱՉԻԿ ումն երաժիշտ, այլ չգիտեմ երեց թէ աշխարհիկ։

3. ՊԱՏՄԻՉ մեր անուանեալ յինէն ևս և ԱՐՔՈՒՆԻ պատմիչ կամ ՊԱՏՄԻՉ Կիլիկիոյ՝ այն է զորմէ գրեալ եմ ի յառաջաբանի Սիսուանայ, էջ ԺԱ[14]։ Քանզի զաշխարհաբառ գրվածոց է խնդիրդ, որպէս զուշակի, յիշելի է և բժշկարանն յարաբացի լեզուէ թարգմանեալ, հրամանաւ Գագկայ յաղթող արքայի, որ է անշուշտ մի ի վերոհիշելոցդ, և յառաջ քան զԺԲ դար։ Է առ ձեզ հին բժշկարան մի՝ զորոյ հատուածս ինչ ընկալեալ ոչ բազմօք յառաջ ի Ձէնջ և բաղդատեալ ընդ մերում օրինակի՝ գտի ոչ աննման մարթի, կարծեմ և զայդ գրել Ձեզ ընդ հնագոյն աշխարհաբարբառն։

Ըստ ակնարկութեանդ ընդօրինակեցի հատուածս ինչ յայնց խնդրելեաց։

Ա. Երկու գործք ուրոյն ընծային Վարդանաց, զոր համարիմ Պատմիչն, քանզի ըստ պատմութեան Կիրակոսի՝ երթեալ էր նորա ի Կիլիկիա և մնացեալ անդ առ ժամանակ մի. և վայելէր նմա համարձակութիւն ունել առ թագաւորուն, յորոյ խնդրոյ գրէ այլևայլ լուծմունս, որպէս յիշի ի հատուածիդ։

Բ. Եւ զատ յայնցանէ զմեկնութիւն քերականին, որ և ուրոյն գտանի գրեալ ի ձեռագիրս. և թէպէտ օրինակ մի ասէ Վարդանայ վարդապետի Կիլիկեցւոյ յօրինեալ զայն, այլ յիշեալ հատուածդ ինքնին վկայէ, զի այն է հեղինակ լուծմանցն և մեկնութեան։

Գ. Երզնկացւոյն զրածն՝ առ մեզ թերի մնա, և բովանդակութիւն զոր ունիմք, լիցի իբրև 15 չափ հատուածիս ընդօրինակելոյ. և որպէս ի սմա և յայլն ամենայն չերևի շատ շնորհ գեղջուկ բանի։

Դ. Վասն Սմբատայ՝ հատուածքդ ընդօրինակեալք բաւականասցին կարծեմ. զառաւելն մարթ է Քեզ քննել և յԱսսիզքն տպագրելոյ[15]։ Բաղդատութեամբ բանին, որ զԲժկաց՝ տեսանի, զի ոչ ամենեսիմբ բառ առ բառ հետևի Մխիթարայ Գոշի ի թարգմանութիւն։

Ե. Գրաստուն բժշկարանն՝ հատուած մի և եթ է առ մեզ, իբրև հնգապատիկ ընդօրինակելոցս և այն ոչ միահետ. այլ առաջին տասն գլուխք (յորոց զերկուս ընդօրինակեցի) և ապա ԻԹ և Լ գլուխք։

Յուսամ փոքր ի շատէ տուեալ զպատասխանիս հարցմանցդ. հարցից և ես միւսանգամ, զմիանգամ հարցեալս. թէ իցէ՞ գտեալ Վ<երապատուելի> Հ<այր> Եղիշեայ՝ ձերոյ հայերէն տպագիր մի հին, հանդերձ թուականաւ. եթէ իցէ այո, հաճեսջիր ծանուցանել, ապա թէ ոչ, մի՛ լինիր աշխատ ի բացասութեան, այլ ողջ լեր կրկին բարեկենդանութեամբ։

Եղբայրակից

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ռ.Կ.[16]

№ 3

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 13 փեբր<ուար> 1888

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր

Ընդունիմ սիրով զսէրդ, ոչ զգովաբանութիւն, զի ես փութացայ գրել, առ ի չվրիպելոյ յօրէ անտի տօնականէ քեզ և ինձ[17]. ինքնին օրինակեցի զնշխարս ինչ բանից զի և անուանակիցն իմ այնպէս առնէր և դարձեալ զի երբեմն առաւել շփոթ լինի և երկարութիւն ժամանակի ի բացատրելն այլում զայս ինչ և զայն որոնել և ընդօրինակել, քան ինքնին առնելով։ Այլ այսոքիկ ոչ ինչ են և թաղեսցին ընդ Բարեկենդանի։

Ոչ յիշեմ արդ յումէ և որպէս լուեալ էի զգիւտ հնատիպ մատենի ի ձերդ վ<երապատուելի> Հ<այր> Եղիշեայ[18], այլ թէ առաքեալ իցէ զայն ի վանքդ թէ ոչ՝ չգիտեմ. գուցէ և զոր լուայս և զոր կարծեմս՝ սխալ իցէ։

Է առ մեզ մատեան մի տպագրեալ ի Վենետիկ, ի նշանակեալ թուականիդ ՋՃԹ, և է Յիսուս որդի, յորոյ յիշատակարանքն, ասէ տպագրողն, տպագրեալ և զՍաղմոս, որոյ

օրինակ գտանի առ Ձեզ[19], վասն որոյ և հաճութեամբ ընդունեմ զյիշատակարանն, երբ պարապով շնորհեսցէ սերդ, որով և մնամ նմին

Խ. Եղբայրակից

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[20]

№ 4

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս.Ղազար, 5 ապրիլի 1888

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր

Յետ աւետելոյ զՔրիստոս յարութեան, կարեմ փոխարեն ողջունի Պ<արոն> Խալաթյանի՝ զնորին իսկ ողջոյն ի դիմաց նորին առաքել, զի ի քաղաքի աստ է այժմիկ[21]:

Շնորհ ունիմ վասն Յիշատակարանի Սաղմոսին տպագրելոց ի Վենետիկ, և ևս առաւել վասն ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐԻՆ ՀԱՅՈՑ[22]. զի հանգուցէր զհետաքննութիւն իմ. նովին խաչանիշ տպագրատան կնքով կայր և առ մեզ տպագիր և համարէի տպագրեալ յառաջին կէս ԺԶ դարու. ցուցեալ էր իմ բազմաց զքառատառեան կնիքն, երբեմն և Պերկիաւսի մեծի տպագրողի[23], որ խոստացաւ ստուգել, այլ ոչ կարաց (զի և վաղ մեռաւ, յետ այնր), և ոչ ոք, յորոց ցուցի՝ կարացին գտանել զտեղի կամ զքաղաք տպագրութեան գրոցն: Արդ փորձեսցէ և Վ<երապատուելի> եղբայրդ ի մեծի մայրաքաղաքիդ, և յուսամ զի յաջողագոյն քան զիս գտցի:

Գերապ<այծառ> Աբբահայրս մեր ողջունէ զԱթոռակից իւր և եղբարքս զեղբարքդ, որպէս և եսս

Խ. Եղբայրակից

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[24]

№ 5

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Ս. Ղազար, 24 սեպտեմբերի 1889

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր

Որքան և ի սէրտ սրտէ շնորհակալ եմ վասն խնամոտ, փութով ընդօրինակութեան բառից Բժշկարանին այնքան և ամօթապարտ զտանիմ ոչ կարելով և փոքու իւիք արտաքուստ կամ նիւթապէս և շնորհելումդ և յօժարութեանդ յառաւելն ևս։

Յետ հրատարակութեան ոչ ևս եմ դարձեալ ի քննութիւն գրոցն վաստակոց[25], և ոչ ինչ նոր եկն ի յայտ յիմ գիտութեան։ Զարմանալի իմն է թարգմանութիւնն, այնու, զի ուրեք ռամկախօս և մերձաւոր մեզ ի ժամանակաւ երևի, և այլուր գրաբան և հնահետող։ Առն հմտի և ոչ հետևակի թուի ինձ գործն. ցաւ է զի ոչ գտանին հին օրինակք գրոցն, և Ձերն լաւագոյն է. ի ցանկս գրոց Էջմիածնի ոչ է յիշելի դա և ոչ այլուր. կոյր կամ աչքակապուկ ժամանակի թողնելի է նոր ինչ ցուցանել։

Եթէ արաբագէտք մայրաքաղաքիդ ճանաչիցեն զարաբացի թարգմանութիւն, զահեցցեն արդեօք և նշոյլ ի մեզ։

Պ<ատուարժան> Հ. Աթանաս՝ ողջունիւ ծանուցանել խնդրէ[26], զի զգոյն կազմի ժամագրոցն սևագոյն կամի և զզարդսն ի վերայն յաւէտ փռանկականս քան գերմանականս։

Իսկ ես յաւելեալն ի ժտել՝ խնդրեմ զի երբ և դէպ լիցի Ձեզ գրել ումեք ի մենջ, ի պատառիկ մի թղթոյ, նշանակեսջիք ի վերոյիշեալ բառից անտի բժշկարանին, զառընթէր բառն Թութիա անուան, ԽԼՐԻ՞Կ է, թէ ԽՇՐԻԿ, զի ոչ կարացի որոշել, և դարձեալ, գուցէ՞ ի միջի երկոցուն անուանցն անջրպետ կամ ստորակէտ։

Ողջոյն առ արգոյ եղբարսդ և համբոյր աջոյ արհիպատիւ Աբբահօրդ[27], և քեզ գրկալիր սէր։

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշանեան

№ 6

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս.Ղազար, 13 փեբր<ուարի> 1889

Մեծարգոյ և սիրելի եղբայր.

Քննեցի ի Բժշկարանս մեր և ոչ գտի զհատուած բանին Բունիաթայ[28], թէպէտ և գոյր ի միումն խրատ դարմանելոյ զՍԸՔԹԱ կոչեցեալ ախտն: Իսկ յիշատակ Պաղտատցի ծեր բժշկին ի հին բժշկարանի մերում, գտանք ի կարգի բանից գրոցն, նոյնագիր և ոչ եկամուտ ի լուսանցս և է այսպէս:

«Նշանք պատրաստութեան և մտապահի, զոր արար ծեր բժիշկն Պաղտատցին, ինձ, Հեթմոյ Սեւաստիօսիս վասն Միջացվու, կոլնջի, և այլոց այսպիսեաց: Վեց օր պատրաստ պահէ զմարդն, և յամէն օր յանօթուց խմցո Սքնճային նուկի Ա, Բ նուկի ջրով և ուտելոյ՝ հաւու և գառին զօմնի, ջուր մէն»:

Հարցանիս զկարծիսս զգրութենէդ: Դա բարուք է, այլ զի շարժառիթն թուի ինձ խնդիր տնչման տառից, զորմէ գրեալքն այսր անդր ղօղանջեն ի գլուխ իմ և եթէ զամենայն ընթեռնուի՝ տանջէին ևս, խիթամ թէ ՉԱՓԸ ՉԱՆՅՆԻ[29]:

Այնու սիրով, որով ես դու առ իս, եմ և ես

Խ.Ծ. և եղբայր

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ռ.Կ.[30]

№ 7

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 29 մայիս, <18>90

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր.

Ներեսջիր, եթէ տակաւին ի խուռն հնչմանց պէսպէս ձայնից, առթիւ ծանօթ յիսներիկիս, ալէկոծեալ գլուխ իմ ոչ կարացէ թարգմանել զսիրտս՝ ի պատասխանի շնորհալից և շնորհաբէր նամակիդ[31], բայց զի քաջ գիտեմ նմին գիտակից զՔեզ, սիրելի եղբայր, ես ինքնին ինձ կանխեմ ներողամիտ լինել. այն զի ոչ բանից ի միջի մերում՝ է հանդէս, այլ սիրո զգացման. և դարձեալ զի երկաքանչիւր եւս, որպէս և անուամբ և այլով իւիք հաւասար գտանիմք, ի նմին պայմանի կամք և աստանօր. իմ՝ թերևս անժուժութեամբ և ստոյգ անարժանութեամբ յառաջէլ ի ձեռնադրութիւն, Քո՝ խոհական ընթացիւք և արժանեօք փոքու խտրոցու ամսոց՝ հետեւեալ ի շաւիղ սրբոյ սեղանոյն: Վասն այսորիկ և արդարապէս ամենայն իրօք ոչ միայն վայել, այլ եւ հարկ իրաւանց է ինձ՝ մաղթել Քեզ, զոր միանգամ մաղթեսցո ի շնորհաց Տեառն[32], այլ խնդրեմ և զյաւելումն սոցին ի մեզ, առ բարւոք եւս կատարել զպաշտօնն սուրբ յօգուտ անձանց և եղբարց և ի շինութիւն եկեղեցւոյ և աշխարհի ուշ կալեալ առաջնոյն և զգուշացեալ երկրորդեն, որոյ աղաղակք զովասանականք՝ առաւէլ ի յանդիմանութիւն կրթին յիս քան ի հաճութիւն սնոտի:

Աղաչեմ մատուցանել առ Ամենապատիւ տէրդ և Հայր զխոնարհ յարգութիւն իմ և զուզահամբոյր[33], նոյնպէս և վերապատուելի եղբարցդ զողջոյն խնդակցութեան, որք այդքան ջերմ սիրով աւանդեալ էին Քեզ զմաղթանս իւրեանց. և լեր աներկմիտ, որպէս հաւատամ թէ իցես, զի այդպիսի Ձեր եղբայրական մաղթանք զերազանցեն զբնաւ այլովքն. և ի հաւաստիս՝ ընկալ զհամբոյրս սիրոյ և մտերմութեան, որ առ

մեծարգոյ եղբայրդ իմ.

Խ.Ծ. և եղբայր

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[34]

№ 8

<ՂԵՎՈՆԴ ՀՈՎՆԱՆՅԱՆԻՆ>?

Վենետիկ, Ս. Ղազար, 16 նոյեմբեր 1893

Վերապատուելի հայր.

Ոչ միայն շնորհակալութեամբ ընդունեցա բուսական անվանց ղրկած ծանոթությունները, այլ և գոհունակությամբ, որ չեք աճապարած իմ պատճառով ձեր կարևոր գործերը կերպով մի հետաձգելու[35]: Շնորհակալ եմ նաև բառերը մեկնողաց և ավելցընողաց:

Փափագէի միայն իմանալ, թե այն մեկ երկու բառերու՝ որոց ուսումնական լատին խոսքերն ալ նշանակած են, իրական բույսերը բուսաբանից ցուցընելո՞վ ստուգված են անվանքն, թե՞ այլազգ. հատկապես ԽԱԺՈՒՐԵԿ և ԿԱՔՈՏ ծաղկանց անվանքն:

Խնդրեմ առթիվս՝ խոնարհական աջհամբոյրս մատուցանել Գերապայծառ Աբբահոր և ողջույնքս առ մեծարգո Հ<այր> Հովհաննես[36] և առ Հ<արգելի> ընկերս. և քեզ ողջ և քաջառողջ լինել մաղթեմ:

Խ.Ծ.

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[37]

№ 9

<ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս.Ղազար, 26 հոկտ<եմբեր> 1895

Յառաջ քան զամենայն, շնորհ ունիմ աներկբայ մտերմութեանդ, և երկրորդ, սիրահիրաւէր առաջարկութեանդ, նաև ի դիմաց խորհրդակից եղբարցս և Գերապ<այծառ> Գլխոյս. որք ամենեքին ստուգապէս խնդակիցք և մաղթակիցք են Յ<արգելի> ՌԻխտիդ, եւս առաւել աստուածախնամ Գերապ<այծառ> Հորդ, ի յիսնամեկի սուրբ օծութեան և արժանաւոր բոլորման[38]. յոր՝ եթէ ոչ նոյնքան եւս՝ այլև ոչ նուազ՝ յաւելցէ Տէր:

Այլ որքան և հաճոյ էր համախմբութիւն կամ նուիրակութիւն եղբայրակցացս ի հանդիսիդ, արտասուալի և արիւնալի դէպք ազգայնոցս՝ ընկճեալ կապեն զոտս մեր,

ընդարձակելով միայն զսիրտս աղերսարկուս[39]։ Վասն այսորիկ, սիրելիդ իմ և յարգելիդ եղբայր, ներողամիտ լեր քոյին եղբարբք և փոխանակ անձանց ընկալջիք զյոժարակամ մաղթանս նոցին, և առանձին զիմս ծրարելով ի Յիսուսընկալ թերթս շրթանցդ, անտուստ համբոյր մի մեծ ու ջերմիկ կնքեա յօրհնաբաշխ աջ հանդիսացեալ Արհիականիդ. և փոխարէն առ յինէն ընկալ քեզ, և ողջ լեր յամայր։

Ն.Ծ. և եղբայրակից

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[40]

№ 10

<ԱՐՍԵՆ ԱՅՏԸՆՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս.Ղազար, 1 փեբր<ուար> 1897

Գերապատիւ տէր հայր.

Իբրև մերձաւորագունի և սիրողագունի հոգեկցիդ հանգուցելոյ ի տէր և իմոյ անուանակցի և սիրելւոյ, կարեկից լինիմ Գեր<ապատիւ> եղբօրդ. աղօթեմ վասն նորա և մաղթեմ զբարեխօսութիւն նորին, առ ընկալուչ իւր, շնորհել քեզ յաւելուած ժամանակաց յառաւելութիւն հոգւոյ[41]։

Խնդրեմ ևս ի սիրույդ, եթէ հաճեսցի, հաղորդել զկարեկցութիւնս իմ առ համօրէն ուխտ եղբայրութեանդ Ձերոյ, հանդերձ Արհիական Գլխովն[42], և յանձնել զիս յարժանաւոր աղօթս նոցին և քո

Գեր<ապատիւ> եղբօրդ

Ն.Ծ. և եղբայրակից

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ո.Կ.[43]

Ողջոյն մեծարանաց առ Գերապատիւ Արքեպիսկոպոս Հյուրանոցիդ, առ գեր<ապատիւ> Ռուպեան և առ ոմն։

[1] Նամակի վրա կա Անտոնյանի հետևյալ նշումը. «Հ. Ղեւոնդ վ. Մ<արգարի> Ալիշան ի Վենետիկէ. ընկ<ալայ> ի 4 մայիսի 1885, 6 կոտ<որ> դրոշմեալք նկարովք բերդին Պապառօնի, և 5 կոտ<որ> բնագիր ծրագրոցն ի Հ<այր> Կղեմայ Սիպիլեանէ յետս. եւ պատկեր Լեւոնի Ա. լատինագիր Անտիոքայ. յ 18 մայ<իսի> գրեցի պատասխանի»:

[2] Ալիշանը նկատի ունի Կիլիկյան Հայաստանում, պատմական Տարսոն քաղաքից հյուսիս գտնվող Չանտըր Կալեսի (Եվրոպական արտասանությամբ՝ Պապեռոն կամ Պապառոն) բերդը, որի պատմա-աշխարհագրական տեղագրությանը նա հանգամանորեն անդրադարձել է իր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության մեջ (Վենետիկ, 1885 թ., էջ 69-74): Բերդի մատիտանկարները Սիմոն Անտոնյանը վերցնում է իր միաբանակից ընկերոջ Կղեմես Սիպիլյանի (1824-1878 թթ.) անձնական արխիվից, որը 1875 թ. աշնանը եղել էր այդ վայրերում և առաքում էր Ալիշանին, մի բան, որը ակնարկված է նամակի հետագա շարադրանքում: Պապեռոնի բերդի՝ հիշատակված երկու մատիտանկարները Ալիշանը զետեղել է իր վերոհիշյալ աշխատության մեջ (էջ 70-71):

[3] **Շլումբերգեր Գուստավ-Ադոլֆ** (1844-1929) – ֆրանսիացի պատմաբան, դրամագետ: Բյուզանդական կայսրության հին շրջանի պատմությանը վերաբերող հմտալից աշխատություններից բացի, նշանակալից գործ է կատարել միջնադարյան դրամագիտության մասնագիտական ուսումնասիրության ասպարեզում: Նրա՝ «Դրամագիտությունը Լատինական արևելքում» (Փարիզ, 1878-1882 թթ.), «Բյուզանդական կայսրության հերալդիկան» (անդ, 1884 թ.), և մանավանդ՝ «Բյուզանդական հասարակապետությունը 10-րդ դարի վերջում» (Անդ, 1896-1905 թթ., երեք մեծադիր հատորներ)աշխատությունները փաստական հարուստ նյութի ընդգրկման տեսակետից ուշագրավ են անգամ այսօր:

[4] **Լանգլուա Վիկտոր** (1829-1869 թթ.) – ֆրանսիացի հայագետ, արևելագետ, Վենետիկի Մխիթարյանների մտերիմը: Ավարտել է Փարիզի Արևելյան կենդանի լեզուների դպրոցը և հմտանալով հայերենի մեջ՝ սկսել է զբաղվել հայ մշակույթի ուսումնասիրությամբ: 1852 թ. Նապոլեոն Բ. Կայսեր կարգադրությամբ, ուղարկվում է Փոքր Հայաստան և Կիլիկիա, պատմական այդ տեղավայրերի ուսումնասիրության համար, որը տևում է շուրջ մեկ տարի: Հետևանքը լինում է «Հայոց դրամագիտությունը հին ժամանակներում» (Փարիզ, 1855 թ.), «Հայոց դրամագիտությունը միջին դարերում» (Անդ, Ն.Թ.), «Ճանապարհորդություն դեպի Կիլիկիա և Տավրոսի լեռները» (Անդ, 1861 թ.) և այլ ուշագրավ աշխատությունները: Նրա գրչին է պատկանում նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության առաջին ամբողջական պատմությունը, գրված ֆրանսերեն լեզվով: Ալիշանի հիշատակած Պետրոս թագավորի հայագիր դրամին Լանգլուան անդրադարձել է իր «Հայոց դրամագիտությունը միջին դարերում» ֆրանսերեն աշխատության էջ 93-97-ում (տրված է հիշված հայոց թագավորի կենսագրությունը և նրա կտրած դրամի գիտական նկարագրությունը):

[5] Ակնարկում է իր կրտսեր եղբորը՝ կրթական-մշակութային գործիչ, դրամագետ (նումիզմատիստ) Սերովբե Ալիշանյանին (1822-1903): Վերջինս ավագ եղբոր հետ մեկտեղ 1832 թ. մեկնում է Վենետիկ՝ ուսումնառության, սովորում է հինգ տարի և «կրակուբոց բնավորություն մը ունենալուն պատճառով» հոգևորական կոչում ընդունելու համար անհարմար համարվելով, վերադարձվում է Պոլիս: 1845 թ. առանց որևէ հիմնավոր պատճառաբանության մեկնում է Ամերիկա, բնակություն է հաստատում նախ՝ Վաշինգտոնում, ապա Բոստոնում, անդամագրվում է երիտասարդական «Բրաունինգ Կլուբին» և սկսում է գործուն մասնակցություն ունենալ տեղի հայկական համայնքի կյանքին: 1847-ին Սերովբե Ալիշանյանը վերադառնում է Պոլիս, արդեն որպես ճանաչված դրամագետ, այդ բնույթի հոդվածներով սկսում է հանդես գալ ժամանակի պարբերականներում «Սերովբէ Պետրոսյան» (ազգանվան համար օգտագործում էր հոր՝ Պետրոս Ալիշանի անունը) և «Ս. Ալիշանյան» ստորագրություններով: Ալիշանյան եղբայրները հարազատի ջերմ սիրով կապված են եղել իրար հետ, աշխույժ նամակագրական կապ են ունեցել (տարեկան մինչև քառասուն նամակ), Ղևոնդ Ալիշանը բանաստեղծություններ ունի նվիրված իր եղբորը, իսկ Սերովբեն հայկական դրամագիտության հետ առնչվող բազմաթիվ հարցերում մշտապես օգնել և խորհուրդներ է տվել ավագ եղբորը:

[6] Կիլիկիայի թագավոր Լևոն Ա-ի և նրան վերագրված դրամների քննությանը (մակագրությունների վերծանում, դրանց գիտական-բանասիրական արժեքը, դրանց համեմատական քննությունը, դրամների կշռային հարաբերությունները և այլն) Ալիշանը հանգամանորեն անդրադարձել է իր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության մեջ (էջ 378-388):

[7] Դրամագիտությանը նվիրված Սիմոն Անտոնյանի աշխատությունը, որն ակնարկում է Ալիշանը, ունի «Մի հնագույն հայկական դրամ» խորագիրը, և հրատարակվել է Վիեննայի «Դրամագիտական օրաթերթ» պարբերականում, գերմաներեն լեզվով:

[8] Ակնարկում է Սուրբ Ղևոնդիոսի եկեղեցական տոնակատարությունը, որը հանդիսավորաբար տեղի էր ունենում յուրաքանչյուր տարվա ապրիլի 13-ին, և որը, հետևաբար, հանդիսանում էր Ղևոնդ Ալիշանի և Ղևոնդ Հովնանյանի անվանակոչության տոնը: **Ղևոնդ Հովնանյան** (1817-1897 թթ.) – Վիեննայի Մխիթարյան միաբանության նշանավոր անդամներից, բանասեր, լեզվաբան, թարգմանիչ (հունարենից և ֆրանսերենից-հայերեն): Իր ավագ ընկերների հետ մեկտեղ, եղել է «Հանդես ամսօրյա» պարբերականի հիմնադիրներից մեկը: ՈՒշագրավ է նրա եռահատոր «Քերականություն գաղղիերեն լեզվի» (Վիեննա, 1844 թ., վերահրատարակվել է երեք անգամ) ձեռնարկը, «Պատմություն քաղաքականության եվրոպական տերությանց» ուսումնասիրությունը (չորս հատոր, անղ, 1856-1860 թթ.), և շուրջ տաս տարվա աշխատանքի արդյունք հանդիսացող «Հետազոտություն նախնյաց ռամկորենի վրա» (Ա և Բ գիրք, 1896-1897 թթ., անավարտ) աշխատությունը: «Ռամկորեն» լեզվի և նրա քերականության հետ առնչվող այլևայլ հարցերի մասին Հովնանյանը բազմիցս հանդես է եկել «Հանդես ամսօրյա»ում, ինչպես նաև մշտապես դիմել է Ալիշանին և ունկնդրել նրա կարծիքները:

[9] Ակնարկում է Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր, հայ երաժշտության տեսաբան, բանասեր, թարգմանիչ (լատիներենից-գրաբար) Իգնատիոս Կյուրեղյանին (1833-1921 թթ.), որը միաբանության աբբահայր էր ընտրվել 1876 թ. օգոստոսի 2-ին:

[10] Նկատի ունի Կիրակոս Գանձակեցու «Համառօտ պատմութիւն» աշխատությունը (Վենետիկ, 1865 թ., 265 էջ), որը հրատարակության է պատրաստել (բնագիր, ընդարձակ առաջաբան և ճոխ ծանոթագրություններ) ինքը՝ Ղևոնդ Ալիշանը:

[11] Տե՛ս Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի (հրատ. Մ. Էմին)» գիրքը (Մոսկվա, 1860 թ., էջ 179-182): Այստեղ զետեղված է Դավթակ քերթողի «Ողբք ի մահն Ջուանշիրի մեծի իշխանին» պոեմը:

[12] Տե՛ս Թովմա Արծրունի «Պատմութիւն տանն Արծրունեաց», Պոլիս, 1852 թ., էջ 63:

[13] Տե՛ս «Գրիգոր Մագիստրոսի թղթերը» (հրատ. Կ. Կոստանյանց), Ալեքսանդրապոլ, 1910 թ., էջ 124-127 (Տրված է Դանիել Երաժշտի գործունեության համառոտ բնութագրությունը):

[14] Իր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության (Վենետիկ, 1885 թ.) նշված էջերում, Ալիշանը պատմական Կիլիկիայի մասին խոսող պատմիչներին բաժանել է երկու խմբի: Պատմիչներ, որոնց գործերում պատահում են այլևայլ բնույթի տեղեկություններ Կիլիկիայի մասին և պատմիչներ, որոնք գրել են միայն և բացառապես Կիլիկիայի մասին: Վերջիններիս Ալիշանն անվանել է «Պատմիչ Կիլիկիոյ» կամ «Արքունի պատմիչ» և կամ վերջապես, «Պատմիչ մեր» և այս հանգամանքն էլ ակնարկված է նամակում:

[15] Ակնարկում է Անտիոքի վարչակառավարական օրենքների (Ասսիզների) ժողովածուն, որը կազմել էր Սմբատ Գունդստաբլը և որն առաջին անգամ գտավ և «Բազմավեպում» (1876 թ., №10-12) հրատարակեց ինքը՝ Ղևոնդ Ալիշանը (հայերեն-ֆրանսերեն համատեղ բնագիր, ընդարձակ առաջաբան և ծանոթագրություններ)՝ «Սմբատ Գունդստաբլ հայոց և Ասսիզք Անտիոքայ» վերնագրով: Հետագայում Ալիշանն այն օգտագործել է որպես աղբյուր իր «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշխատության համար (Վենետիկ, 1885 թ., էջ 70-77):

[16] Հիմնելով հետագայում իր անունը կրող միաբանությունը, Մխիթար Սեբաստացին (1676-1749 թթ.), նրան պաշտոնապես տվեց «Որդեգիր Կուսին, վարդապետ ապաշխարության» անվանումը: Ըստ այդմ՝ միաբանության յուրաքանչյուր անդամ, իր անուն-ազգանունը նշելուց հետո, պարտադրաբար ավելացնում էր «Ո.Կ.Վ.Ա.» կամ ավելի հաճախ՝ «Ո.Կ.» տառերը, իր՝ այդ միաբանության անդամ լինելը հավաստելու համար, ինչը և, գրեթե միշտ անում էր նաև Ալիշանը: Սեբաստացու մահվանից շատ հետո միայն, միաբանությունը ստացավ հանրածանոթ «Մխիթարյան» հորջորջումը:

[17] Նկատի ունի իր և Ղևոնդ Հովնանյանի անվանակոչության օրը: Տե՛ս № 2-ի (1)-ը:

[18] Նկատի ունի Եղիշե Գաֆթանյանին: Տե՛ս № 2 (9)-ը:

[19] Խոսքը վերաբերում է Ներսես Շնորհալու «Հիսուս որդի» չափածո երկին, որը հրատարակվել է Վենետիկում, 1660 թ. և որի հրատարակիչն է «ազգաւ լատինացի» Ճուան Բատիստան: Վերջինս 1684 թ. Վենետիկում, Ոսկան Ազուլեցու «արդյամբք և ցոյիւք» հրատարակել է նաև Սաղմոս (ճիշտ վերնագիրն է «Գիրք Սաղմոսաց Դաւթի»), որը համարվում է ժամանակի ուշագրավ հրատարակություններից մեկը:

[20] Իմա՝ «Որդեգիր կուսին»: Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը: Տե՛ս № 2-ի (10)-ը:

[21] **Գրիգոր Խալաթյան** (1858-1912) – պատմաբան, մատենագետ, ազգագրագետ, թարգմանիչ (հայերենից-ռուսերեն): Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվագրական բաժինն ավարտելուց հետո (1881 թ.)՝ հայ գրականության ուսուցիչ, ապա տեսուչ տեղի Լազարյան ճեմարանում: Սկզբնական շրջանում պարբերականներում հոդվածներով հանդես գալուց հետո (հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով) նա շուտով հրատարակում է իր «Армянский эпос в истории Моисея Хоренского» (1896 թ.), «Армянские Аршакиды в истории Армении Моисея Хоренского» (1903 թ.) աշխատությունները, որոնք հռչակեցին նրանց հեղինակին որպես կարող բանասեր-պատմաբանի: Խալաթյանի հայագիտական գործերից նշանավոր են «Զենոբ Գլակ» (Վիեննա, 1893 թ.) և «Ղազար Փարպեցի և գործք նորին» (Մոսկվա, 1883 թ.) աշխատությունները, որոնք զգալի ներդրումներ են գիտության այդ բնագավառում: Նրա՝ Վենետիկում լինելու և Ալիշանի հետ անձնապես ծանոթանալու փաստը առաջին անգամ հայտնի է դառնում այս նամակից:

[22] Հիշատակվող Սաղմոսի մասին տե՛ս № 3-ի (3)-ը: Գալով հաջորդ գրքին, ապա Ալիշանը նկատի ունի 1512 թ. Պոլսում հրատարակված «Պարզատումարը», որը համարվում է հայ տպագրության նախապետը և որը հրատարակել է Հակոբ Մեղապարտը: Գրքի վերջին էջում, որպես տպարանանիշ, դրոշմված է հայկական խաչ, որի վերին աջ և ձախ կողմերում գրված են D.i, իսկ ներքևում, համապատասխանաբար՝ Z և A տառերը: Այդ մասին էլ խոսք է գնում նամակի հետագա շարունակության մեջ:

[23] Պերկաւս (ճիշտ ձևը՝ Բերգիաուս) – իտալացի գրահրատարակիչ, Մխիթարյան միաբանության և անձամբ Ալիշանի մտերիմը:

[24] Իմա.«Որդեգիր կուսին»: Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը: Տե՛ս № 2-ի (10):

[25] Նկատի ունի երկրագործության և գյուղատնտեսական կուլտուրաների մշակությանը նվիրված և տարբեր ժամանակներում ու տարբեր լեզուներից (հիմնականում՝ հունարենից) հայերեն թարգմանված հանրահայտ ժողովածուն, որը մասնագիտական առաջաբանով, ծանոթագրություններով ու լրացումներով հրատարակել էր ինքը՝ Ալիշանը, Վենետիկում, 1877 թվականին (հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1862 թ. մարտից սկսած):

[26] **Աթանաս Տիրոյան** (սկզբում՝ Թիրոյան, 1857-1926) – Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, թարգմանիչ (հունարենից և ֆրանսերենից – հայերեն)։ Սկզբնական կրթությունն իր ծննդավայր Կարինում ստանալուց հետո, գալիս է Վենետիկ, ավարտում է Մխիթարյանների դպրոցը և 1878 թ. դառնում է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ։ Առանձին գրքերով լույս տեսած աշխատություններից ուշագրավ են «Հանրագրություն, որ է համազգային գրության նոր ոճ մը» (Վենետիկ, 1907 թ.) սղագրության ձեռնարկը, «Արվեստ տաղաչափության» (Անդ, 1913 թ.) ուսումնասիրությունը և մի քանի ուրիշ գործեր։

[27] Նկատի ունի Արսեն Այտընյանին (1825-1902), որը Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր (5-րդ) էր ընտրվել 1886 թ. օգոստոսի 16-ից, և վարել է այդ պարտականությունը մինչև իր մահը։

[28] **Բունիաթ Սեբաստացի** – 17-րդ դարի հայազգի բժիշկ, որը հիմնականում ապրել ու ստեղծագործել է Թուրքիայի Սամսոն քաղաքում։ Խմբագրել է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատությունը, կատարելով առ այսօր ուշագրավ հավելումներ ու լրացումներ։ 1630 թ. գրել է իր հռչակավոր «Գիրք բժշկության տումարի»՝ հիսուն գլխից բաղկացած աշխատությունը, որտեղ տվել է շուրջ հարյուր հիվանդությունների բժշկագիտական նկարագիրը և առաջարկել դրանց բուժման եղանակները. ընդհուպ մինչև վիրահատություն։ Բունիաթ Սեբաստացու վերոհիշյալ աշխատությունը մեզ է հասել մի քանի ընդօրինակություններով։

[29] 1888 թ. հունվարից «Հանդես ամսօրյան» սկսում է հատվածաբար հրատարակել Ղևոնդ Հովնանյանի «Հետազոտությունք նախնյաց ռամկորենի վրա» աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանորեն քննում է «ռամկորեն մատենագրությունը», հայ բժիշկների (Մխիթար Հերացի, Ամիրդովլաթ Ամասիացի) կյանքն ու գործը, նրանց բժշկարանները, վերլուծում է «Ռամկագիր եկեղեցականների» գրական ժառանգությունը և այլն (առանձին գրքով հրատարակվել է 1897 թ.)։ Աշխատությունը գրելիս Հովնանյանը մշտապես խորհրդակցում էր Ալիշանի հետ, իսկ «Հանդես ամսօրյա»-ում իր գործի հրատարակությունը սկսելուն պես շտապել է իմանալ նրա կարծիքը։

[30] Իմա՛ «Որդեգիր կուսին»։ Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը։ Տե՛ս № 2-ի (10)-ը։

[31] Ակնարկում է իր հիսնամյա հոբելյանի տոնակատարությունը, որը Վենետիկում նշվեց 1890 թ. մայիսի 13-ին և շուտով վերածվեց համազգային տոնախմբության, չնայած հոբելյարը գրավոր ուղերձով խնդրել էր «ազգայիններուն», որ այդ հանդիսությունը առհասարակ չկատարվի։ Այդ օրերին Ալիշանի անվամբ ստացվել է 89 բացիկ և 87 հեռագիր, շնորհավորանքներ են ստացվել 65 քաղաքներից (Ալեքսանդրապոլ, Կահիրե, Գանձակ, Երուսաղեմ, Էջմիածին, Լիվորնո, Լոնդոն և այլն), զանազան պարբերականներում հանդես են եկել հայ մտավորականության գրեթե բոլոր ներկայացուցիչները (Հ. Թումանյան, Ղ. Աղայան, Ալ. Շիրվանզադե, Վ. Փափազյան, Գ. Սունդուկյան և այլն)։

[32] Ղևոնդ Հովնանյանի հիսնամյա հոբելյանը, որը բավարար շուքով տոնեց Վիեննայի Մխիթարյան միաբանությունը, լրանում էր նույն թվականի նոյեմբեր ամսին, այսինքն՝ Ալիշանի հոբելյանից վեց ամիս հետո։ Այս է, որ ակնարկում է Ալիշանը և ժամանակից փոքր-ինչ առաջ ընկնելով, շնորհավորում է նրան։

[33] Նկատի ունի Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Արսեն Այտընյանին։ Տե՛ս նաև 6 (3)-ը։

[34] Իմա՛ «Որդեգիր կուսին»։ Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը։ Տե՛ս № 2-ի (10)-ը։

[35] Սկսած 1893 թ. մարտից Ալիշանը «Բազմավեպում» սկսում է հաջորդաբար հրատարակել հայկական բույսերի գիտական ուսումնասիրությանը նվիրված իր աշխատությունը «Հայկական բուսաբառություն» խորագրով, որը երկու տարի հետո, 1895-ին լույս է ընծայում առանձին գրքով, «Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն» քիչ ավելի փոփոխված խորագրով։ Խոսքն այստեղ վերաբերում է «Բազմավեպում»

հրատարակված հատվածներում եղած որոշ անճշտություններին, որը, ինչպես միշտ, շնորհակալությամբ ընդունում և հաշվի էր առնում հեղինակը:

[36] **Հովհաննես Թումայան** – Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ-բանասեր: Իր միաբանակից ընկերների հետ միասին (Գր. Գալեմքյարյան, Հակ. Տաշյան, Գաբր. Մեննիշյան) հանդիսացել է «Հանդես ամսօրյա» պարբերականի հիմնադիրը, որտեղ և հանդես է եկել բանասիրական բնույթի շահեկան հոդվածներով: ՈՒնի գերմաներեն լեզվով մի ուսումնասիրություն՝ նվիրված գրաբարի պատմությանը:

[37] Իմա՛ «Որդեգիր կուսին»: Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը: Տե՛ս № 2-ի (10)-ը:

[38] Նկատի ունի Արսեն Այտընյանի հիսնամյա հոբելյանը, որը հանդիսավորաբար նշվեց Վիեննայի Մխիթարյանների մոտ, 1895 թ. նոյեմբերին:

[39] Ակնարկում է հայկական կոտորածները, որոնք թուրքական կառավարության բացահայտ թողտվությամբ ու խրախուսանքով արդեն ծայր էին առել արևմտյան Թուրքիայի հայաշատ գավառներում:

[40] Իմա՛ «Որդեգիր կուսին»: Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը: Տե՛ս № 2-ի (10)-ը:

[41] Ակնարկում է իր անվանակցի, այսինքն՝ Ղևոնդ Հովնանյանի մահը, որը տեղի ունեցավ 1897 թ. հունվարի 26-ին, Վիեննայում:

[42] Նկատի ունի իրեն՝ Արսեն Այտընյանին, որը, ինչպես հայտնի է, աբբահայր էր ընտրվել 1886 թ. օգոստոսի 16-ին:

[43] Իմա՛ «Որդեգիր կուսին»: Մխիթարյան միաբանության անդամների՝ նամակը ավարտելու համար ընդունված ձևը: Տե՛ս № 2-ի (10)-ը: